

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալությամբ և օրհնությամբ կ'արձանագրենք 2013-2014 տարիներու ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին և այլ սրբավայրերու տրուած հետեւեալ քարեպաշտական նուէրները:

1. Հայաստանէն Տիկ. Յամիկ Ֆիլեան Ս. Յակոբայ՝ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկեայ շղթայ մը:

2. Բնիկ Հայաստանցի ֆրանսաբնակ՝ Տէր և Տիկ. Միքէր և Նազիկ Իպոյեաններ Ս. Յակոբայ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրեն ոսկեայ խաչ շղթայով:

3. Զատոս Ալոյեան Ս. Յակոբայ՝ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրեն սպիտակ ոսկեայ մատանի մը:

4. Կ.Պոլիսէն Հոգշ. Տ. Զաքէոս Ծ. Վրդ. Օհանեան Տէր և Տիկ. Սիմոն և Վարդուի Էրկունէշներու միջոցաւ Ս. Յակոբի կը նուիրէ ոսկեզօծ բոժոժներ:

5. Նիւ-Եորքաբնակ Տիար Հրանդ Կուլեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ երեք ձարմանդ՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի պատկերով և Ս. Յ. գրութեամբ: Չորս ձարմանդ՝ «Ն. Պ. Ե. Ս. Յ.» գրութեամբ հայկական ոճով, կարմիր ու կապոյտ գոյներով խաչ մը «Ս. Յ.» գրութեամբ: Սաղաւարտի եօթը ոսկեզօծ խաչեր և պատուական աստղեր:

6. Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը և համայնքը Ամեն. Տէր Նորիհան Ս. Պատրիարք Հօր գահակալութեան առթիւ, արծաթէ ոսկէ սկիւի մը մաղզմայով կը նուիրեն Ս. Յակոբայ տաճարին: Մաղզմայի վրայ գրուած յիշատակարանը հետեւեալն է՝ «Երուսաղէմ Ն. Ա. Տ. Նորիհան Պատրիարք Հօր գահակալութեան առթիւ Կ.Պոլսոյ Պատրիարքական Աթոռէն ի Զրիստոս սիրով և յաջողութեան մաղթանքներով: 4 Յունիս 2013, Երեքշաբթի, Ս. Յակոբեանց Մայր Տաճար:

7. Հայաստանէն Անահիտ Հայրապետեան Ս. Յակոբայ Աստուածածնայ պատկերին կը նուիրէ մէկ գոյգ ոսկեայ, մարգարտեայ քարերով ականջօղ:

8. Ս. Աթոռոյս միաբաններէն՝ Հոգշ. Տ. Էմանուէլ Վրդ. Աթաջանեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ կարմիր հայկական ոճի խաչերով կերպաս և 20 հատ հրեշտակ զարդեր:

9. Մոսկուայէն Տիար Կարէն Ս. Յակոբայ՝ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկեայ շղթայ մը:

10. Աստրալիայէն Ս. Աթոռոյս միաբաններէն Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան Ս.



Յակոբայ տաճարին կը նուիրէ ոսկեզօծ և կապոյտ քարով ձեռաց խաչ մը, ինչպէս նաեւ սպիտակ խաչի բռնիչ մը:

11. Անջունեան ընտանիք Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ՝ Մեծն Բրիտանիոյ Եդուարդ 7-րդ թագաւորի 1908 թուակիր ոսկեդրամ մը:

12. Ռուսիայէն Անատոլի Ֆրմերման Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ սեւ շրջանակով և արծաթագոյն շապիկով սրբապատկեր մը, Ս. Աստուածածին Յիսուս Մանուկով:

13. Քանադաբնակ Տէր և Տիկ. Յակոբ և Ասեա Սարգիսեաններ Ս. Յակոբայ՝ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրեն ոսկեայ խաչ շղթայով:

14. Ռուսիայէն Անանեան ընտանիք Ս. Յակոբի կը նուիրէ մէկ գոյգ մետաղեայ ոսկեզօծ վարդի սրուակ:

15. Պելճիքաբնակ Տիկ. Հայկանուշ Մուրատեան Ս. Յակոբայ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ Աստուածամօր ոսկեայ փոքր պատկեր մը:

16. Ուաշինկթընաբնակ Արոյծ-Նատիա Կօսէեան Ս. Յակոբի կը նուիրէ մեծ գորգ մը, որուն վրայ անգլերէնով արձանագրուած է. “Donated by Arut-Nadya Kosejan. Washington D.C., USA.”

17.- Էջմիածինէն Էվելինա Գէորգեան Ս. Յակոբի տաճարին կը նուիրէ ձեռաց խաչի կարմիր բռնիչ մը:

18. Սաղիմաբնակ Տէր և Տիկ. Նազարէթ և Մարի Չափատարեաններ Ս. Յակոբի կը նուիրեն 24 շիշ պատարագի գինի:

19. Սաղիմաբնակ Տիկ. Արտա Օհաննէսեան Ս. Յակոբի կը նուիրէ Ս. Գէորգի ապակի պատկեր մը իր շրջանակով:

20. Կ.Պոլիսէն Բրշ. Վաղարշակ Սրկ. Սերովբեան Ս. Յակոբի կը նուիրէ տրցակ մը նարօտ, որ Ս. Յակոբի յանձնուեցաւ Տիրացու Միքայէլ Տօնիկեանի ձեռամբ:

21. Մի ոմն ոսկեայ խաչիկ կը նուիրէ Ս. Յակոբայ՝ Աստուածածնի պատկերին:

22. Հայաստանէն Զրվէժի բնակիչ մի ոմն Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ, սպիտակ յատակի վրայ, կեդրոնը աղանի և հրեշտակնե-

րով զարդարուած աւետարանի բռնիչ մը:

23. Մոսկուաբնակ՝ Տիրամայր Լուսինէ Աթաջանեան՝ իր որդւոյն Հոգշ. Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաջանեանի ձեռամբ՝ Ս. Յակոբի կը նուիրէ կարմիր շուրջառ մը ճարմանդով:

24. Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Սեւան Արք. Ղարիպեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ հայկական ոճով, ոսկեզօծ և մանիշակագոյն քարերով ձեռաց խաչ մը:

25. Հայաստանաբնակ Տիկ. Օգարովա Մարգարիտա Ս. Յակոբայ՝ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ աղամանդակուռ ոսկեայ մատանի մը և երկու բարակ շղթաներ:

26. Հայաստանաբնակ Տիկ. Գեղեցիկ Եղիազարեան Ս. Յակոբայ՝ Ս. Աստուածածնայ պատկերին կը նուիրէ կլոր, երկկողմանի պատկերներով զարդ մը ոսկեայ շղթայով:

27. Երեւանի Ս. Կաթողիկէ Եկեղեցւոյ ուխտատւորներ Ս. Յակոբայ տաճարին կը նուիրեն ափսէի փոքր սպիտակ ծածկոց մը:

28. Պելճիքայէն Տիար Տիգրան Մուշեղեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ 100 սեղանի մով, որ յանձնուեցաւ Հոգշ. Տ. Թէոփրոս Վրդ. Զաքարեանի միջոցաւ:

29. Սաղիմաբնակ Սիար Սեւան Փանոսեան Ս. Յակոբայ տաճարին կը նուիրէ 2 թիթեղ ձէթ և անուշահոտ խունկեր:

30. Պատրիարքարանէն Ս. Յակոբայ տաճար բերուեցաւ Պատրիարքական գահ և դրուեցաւ Պատրիարք Սրբազան Հօր գահին վրայ: Յիշատակարանը հետեւեալն է.
«Երուսաղէմի Առաքելական Սրբոց Յակոբեանց Սուրբ Աթոռին նուիրատուութեամբ Արմէն Բաղալեանի, 2010 ձ.:

Սեւան Արք. Ղարիպեան
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

ԵՐԱՆԻ՝ ՈՐ ՈՒՆԻՑԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ



Ռուսաստանի տարբեր քաղաքներէն ժամանած ուխտատւորներ Ամեն. Նորիւհան Պատրիարքին հետ Զալինինկրատ Ս. Փեթրպոլսկ Նիժնի Նովկորոտ

Երեւանի Ս. Յովհաննէս (Կոնդ) եկեղեցւոյ ուխտատւորները Ամեն. Նորիւհան Պատրիարքին հետ

